Կարևոր օր Ջորջիայի համար

«Ես պատրաստվում եմ շուտով մկրտվել»,- ասաց Ջորջիան: «Ճիշտ, ինչպես Հիսուսը մկրտվեց»:



Օլիվիա Քիթերման
(Հիմնված է իրական պատմության վրա)

Այս պատմությունը տեղի է ունեցել Ավստրալիայում:

Ջորջիան վազեց դեպի իր սենյակը, իսկ Մաթիլդան կրնկակոխ հետևեց նրան: Օրը միշտ զվարճալի էր անցնում, երբ նրա ընկերը գալիս էր խաղալու:

«Կարո՞ղ ենք խաղալ քո ռոբոտի հետ»,- հարցրեց Մաթիլդան:

«Այո»,- ասաց Ջորջիան: Դա նրա սիրելի զբաղմունքներից էր:

Մինչ Ջորջիան հանում էր ռոբոտը, Մաթիլդան դիտում էր Ջորջիայի պատին փակցված նկարները: Նա մատնացույց արեց կենտրոնի նկարը:

«Ի՞նչ է սա»,- հարցրեց նա:

«Դա Հիսուս Քրիստոսի մկրտությունն է»,- ասաց Ջորջիան: «Ես պատրաստվում եմ շուտով մկրտվել: Ճիշտ, ինչպես Հիսուսը մկրտվեց»:

«Ինչո՞ւ ես դու մկրտվում», - հարցրեց Մաթիլդան:

«Որովհետև ես ուզում եմ հետևել Հիսուսին»,- ասաց Ջորջիան: «Երբ ես մկրտվեմ, ես խոստանալու եմ դա անել»:

Ապա Ջորջիայի մոտ մի միտք ծագեց: «Կցանկանայի՞ր գալ իմ մկրտությանը»:

«Ես կհարցնեմ մայրիկիս», - ասաց Մաթիլդան:

Մոտենում էր Ջորջիայի մկրտության օրը: Նա կարդում էր իր սուրբ գրությունների պատմությունների գրքից և ամեն շաբաթ հաճախում Երեխաների միություն: Քնելուց առաջ աղոթելուց հետո նա նայում էր Հիսուսի նկարին: Նրան դուր էր գալիս պատկերացնել, թե ինչպես է մկրտվում:

Իր մկրտությանը նախորդող կիրակի օրը Ջորջիան մկրտության հարցազրույց անցավ: Նա և իր ծնողները խոսեցին եպիսկոպոսի հետ նրա գրասենյակում: Նա որոշ հարցեր տվեց Ջորջիային, որպեսզի համոզվի, որ նա պատրաստ է մկրտվելու:

«Դու հավատո՞ւմ ես, որ Հիսուս Քրիստոսը Աստծո Որդին է», - հարցրեց եպիսկոպոսը:

Նա հավատում էր: «Այո»,- ասաց նա:

Եպիսկոպոսը ժպտաց նրան: «Մկրտությունը շատ կարևոր ընտրություն է: Դու ուզո՞ւմ ես մկրտվել»:

Ջորջիան մտածեց, թե ինքը որքան շատ է սիրում Հիսուսին և ցանկանում հետևել Նրան: «Այո», - ասաց նա:

Վերջապես, եկավ Ջորջիայի համար կարևոր օրը: Երբ մտավ ջրի մեջ, նա տեսավ, որ իր ընկերներն ու ընտանիքը նայում էին իրեն: Մաթիլդան նույնպես այնտեղ էր:

Երբ նրա հայրն ասաց մկրտության աղոթքը, այդ խոսքերից Ջորջիան ներքուստ խաղաղ և երջանիկ զգաց իրեն: Ապա նա զգուշությամբ ամբողջովին ընկղմեց նրան ջրի մեջ և անմիջապես դուրս բերեց: Երբ Ջորջիան դուրս եկավ ջրից, երջանիկ և մաքուր զգաց իրեն:

Հայրը ամուր գրկեց նրան: Մայրիկը սրբիչը ձեռքին և ժպիտով սպասում էր նրան աստիճանների վերևում:

Ջորջիան ջերմ զգացումներ ունեցավ: Դա հատուկ օր էր: Նա ընտրել էր հետևել Հիսուսին: Եվ նա ուզում էր շարունակել հետևել Նրան ամեն օր: ●

ՄԿՐՏՈՒԹՅԱՆ ԱՂՈԹՔԸ

Հիսուս Քրիստոսը երկրի վրա մարդկանց զորություն և իշխանություն է տալիս՝ մկրտելու և օրհնելու Իր անունով: Այդ զորությունը կոչվում է քահանայություն: Ձեզ մկրտող անձը ասում է այս հատուկ աղոթքը .

Լիազորված լինելով Հիսուս Քրիստոսի կողմից՝ ես մկրտում եմ քեզ անունով Հոր և Որդու և Սուրբ Հոգու: Ամեն»: